ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

5838 15.30. «18» հունիսի 2019թ No 1632-Ա

№ 19 JUN 2013 ժամ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28 N 162-Ն որոշման 62-րդ կետի, ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշումը և հիմք ընդունելով «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0101100319 առ 14.06.2019թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել թվով 3 դեղի գրանցման հավաստագրի վերաձևակերպումը՝ համաձայն հավելվածի:

2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Լ.Մելիքյանին՝

1) հնգօրյա ժամկետում ապահովել դեղի վերաձևակերպված գրանցման հավաստագրի ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն.

2) սահմանված ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի վերաձևակերպված գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին՝ որպես վերաձևակերպված հավաստագրի ուժի մեջ մտնելու ժամկետ նշել սույն հրամանի տրման օրը.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում պետական գրանցում ստացած դեղերի ցանկը:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

18.06.2019

X

VERIFIED OCSP 18.06.2019 17:15:21 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

19.06.19 15⁰⁰

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ առողջապահության նախարարի
2019 թվականի հունիս « 18 » - ի
N 1632 – Ա հրամանի

## ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

| Հ/Հ | Առևտրային անվանում | Միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները | Դեղաձև | Դեղաչափ և թողարկման ձև (փաթեթավորում) | Արտադրող ֆիրման | Երկիր | Գրանցման հավաստագրի իրավատեր | Բացթողման կարգ | Եզրակացության համար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Էնզիքս | I-էնալապրիլ (էնալապրիլի մալեատ), II-ինդապամիդ | դեղահատեր և թաղանթապատ դեղահատեր | I-10մգ, II-2,5մգ; (30/3x10//5՝ I դեղահատեր+ 5՝ II թաղանթապատ դեղահատեր/) բլիստերում | Հեմոֆարմ ՍՊԸ, 249032, Օբնինսկ, Կալուգա շրջան, Կիևսկոյե շոսե 62 | Ռուսաստան | Նիժֆարմ ԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7, Ռուսաստան | Դ | 16029 |
| 2. | Էնզիքս Դուո | I- էնալապրիլ (էնալապրիլի մալեատ), II-ինդապամիդ | դեղահատեր և թաղանթապատ դեղահատեր | I-10մգ, II-2,5մգ; (45/3x15/10- I դեղահատեր+ 5- II թաղանթապա | Հեմոֆարմ ՍՊԸ, 249032, Օբնինսկ, Կալուգա շրջան, Կիևսկոյե շոսե 62 | Ռուսաստան | Նիժֆարմ ԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7, | Դ | 16028 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | տ դեղահատեր), բլիստերում | | | Ռուսաստան | | |
| 3. | Էնզիքս Դուո Ֆորտե | I-էնալապրիլ (էնալապրիլի մալեատ), II-ինդապամիդ | դեղահատեր և թաղանթապատ դեղահատեր | I-20մգ; II-2,5մգ; (45/3x15/10՝ I դեղահատեր+ 5՝ II թաղանթապատ դեղահատեր/) բլիստերում | Հեմոֆարմ ՍՊԸ, 249032, Օբնինսկ, Կալուգա շրջան, Կիևսկոյե շոսե 62 | Ռուսաստան | Նիժֆարմ ԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7, Ռուսաստան | Դ | 16030 |